«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ



# ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2025-2030թթ

ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
ԳԱՐԻԿ ԳԱԳԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆ

2024թ.

Բովանդակություն

1. Ներածություն
   1.1 Ընդհանուր տվյալներ դպրոցի մասին
   1.2 Դպրոցի պատմությունը
2. Իրավիճակի վերլուծություն
   2.1 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վերլուծություն
   2.2 Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծություն
   2.3 Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերի նկարագրություն
   2.4 Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերի նկարագրություն
   2.5 Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածության վերլուծություն, ուժեղ կողմերի և թերությունների նկարագրություն
3. Նպատակները և խնդիրները, դրանք ապահովող գործողությունները, միջոցները և ժամանակացույցը, արդյունքների չափման մեխանիզմները և գործիքները, զարգացման ծրագրի ռիսկերը և դրանց կանխման հնարավորությունները

## 1. Ներածություն

## 1.1 Ընդհանուր տվյալներ դպրոցի մասին

| | |
|---|---|
| Տեղակայություն | Գեղարքունիք → Մարտունի → Լիճք |
| Դպրոցի լրիվ անվանումը | «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհ․ Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ |
| Դպրոցը ստեղծման տարեթիվը | 1981 |
| Դպրոցի տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի | Ընդհանուր |
| Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցություն | 14 |
| Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի | Միջնակարգ (1-12 դասարաններ) |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | 03Ա 061828 |
| Պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվ | 03/08/2014 |
| Հասցե | Գ. Լիճք, Ա2 թղմ. 12 փ, 8 շ. |
| Հեռախոս | 094644656 |
| Էլ. Փոստ | litchk@schools.am |
| Հիմնական օտար լեզու | Գերմաներեն |
| Տիպը՝ ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի | Եռաստիճան կրթական համակարգ՝ տարրական, միջին, ավագ |
| Փաստացի հաճախող երեխաների թիվը | 752 սովորող, նախակրթարանի 67 սան |
| ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը | 5 |
| Այլազգի սովորողների թիվը | 0 |
| Ուսուցիչների թիվը | 52 |
| Շենքի ընդհանուր մակերեսը, մ2 | 5660.00 |
| Նկուղային հարկի ընդհանուր մակերեսը, մ2 | 324.00 |

| | |
|---|---|
| Դպրոցին կից մաքրվող տարածքի մակերեսը, մ2 | 24120.00 |
| Դպրոցին կից մշակվող մակերեսը (այգի), մ2 | 5 000 |
| Վարձակալության տրված տարածք, մ2 | 10 |

Կրթությունը ցանկացած պետության զարգացման և հզորացման, ազգային անվտանգության ապահովման առանցքն է: Ժամանակակից աշխարհում մրցունակ պետության հիմքը մրցունակ կրթական համակարգի է: Այն ենթադրում է կրթված, ազգային և համամարդկային արժեքներ կրող անհատի, քաղաքացու ձևավորումը:

Արդի աշխարհաքաղաքական իրողություններում գերակա խնդիր է մեզանում մրցունակ կրթության և մասնավորապես հանրակրթության ապահովումը, որը նպատակաուղղված է սովորողի մտավոր, ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առաջընթացին, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Լավագույն դպրոցի ապագան իրավացորեն կարելի է տեսնել ժողովրդավարական, համագործակցային մանկավարժության մեջ: Սրա հիմքում ընկած է այն համոզումնքը, որ կրթօջախում ամեն ինչ պետք արվի սովորողների համար և սովորողների միջոցով: Դպրոցը սովորողին պետք է օգնի ինքն իրեն ճանաչելու, ինքն իրեն բացահայտելու, իր սրտով զգալու գաղտնիքը: Դպրոցի ոգին պետք է ներշնչված լինի փոխադարձ հարգանքի և համագործակցության մթնոլորտով, իսկ դրան հասնելու համար պիտի գործի դնել մանկավարժության ողջ զինանոցը: Ուրեմն այս ամենն իրականացնելու համար դպրոցը պարտավորվում է․

1․ Սովորողներին տալ մրցունակ և հիմնավոր գիտելիքներ,

2․ Դպրոցը դարձնել ավանգարդ ուսումնական հաստատություն, կրթօջախ՝ յուրաքանչյուր աշխատողի և սովորողի ստեղծագործական, վերլուծական, քննադատական կարողությունները բացահայտող և մոտիվացնող, անհատի համակողմանի ձևավորմանը նպաստող, որակյալ կրթություն ապահովող կրթական կենտրոն, որտեղ երաշխավորված կլինեն սովորողների բազմակողմանի զարգացումը, ժողովրդավարական հասարակության լիարժեք անդամների դաստիարակությունը՝ ազգային և համամարդկային արժեքների զուգակցմամբ,

3․ Սովորողների անհատական և տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ յուրաքանչյուր աշակերտի ներգրավվածություն ուսումնառության գործընթացում, սովորողի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին համապատասխան,

4. Սովորողներին ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն, նպաստել հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Դպրոցը պետք է վստահ լինի, որ մեր երկիրը բարեփոխելու երաշխավորված և կարևորագույն գործը նոր սերունդ կրթելն է, ներդրում կատարել ապագայի մեջ և հանուն ապագայի:

Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի առաքելությունը ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության հավասար պայմաններով միջավայր ստեղծելն է, ուր յուրաքանչյուր սովորող կարող է ստանալ իր պահանջներին համապատասխան որակյալ կրթություն: Իսկ որակյալ կրթություն ունենալու համար անհրաժեշտ է՝

- Կրթության իրատեսական բովանդակության ապահովում,
- Ուսուցման միջավայր՝ ժամանակակից պահանջներին համապատասխան,
- Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացում,
- Աշխատանքի արդյունավետ կառավարում,
- Վերջնարդյունքի ապահովում:

Դպրոցի առաքելությունը ներառում է նորարարությունների ներդրման պլանը՝ հաշվի առնելով ապագայի պահանջարկը՝ հստակ նպատակադրելով դպրոցի զարգացումը: Այն հենվում է այն կանխատեսման վրա, թե ինչպիսին կլինի միջավայրն ապագայում, ինչպիսին կլինեն դպրոցի հանդեպ պահանջները և ինչպիսին կլինեն նոր մոդելների ներդրման արդյունքները: Այսպիսի կազմակերպչական մշակույթ ներդնելու դեպքում անհրաժեշտ է՝

1. Կազմակերպված աշխատանք դպրոցի անձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ, առաջնորդների բացահայտում, համապատասխան թիմերի ձևավորում:
2. Զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում և համաձայնեցում թիմերի հետ:
3. Զարգացում երաշխավորող գործողությունների պլանավորում, ռիսկերի կանխատեսում և կանխարգելում կամ արդյունավետ կառավարում:

Դպրոցը և կրթությունը, կարելի է ասել, ազգապահպանման միջոց են, ժողովրդի հարատևման խորհրդանիշ, առավել ևս մեզ համար: Այդ առումով մեծ է մեր պատասխանատվությունը դպրոցը ժողովրդավարական հիմունքի վրա կառուցելու, միևնույն ժամանակ քաղաքականությունից հեռու պահելու մանկավարժության համագործակցային մեթոդները, ուսուցիչ-աշակերտ հարաբերություններ մշակելու համար:

Դպրոցը պետք է զարգացնել անընդմեջ կրթություն-մանկավարժություն հասարակությանը հասցնել այն մակարդակին, որ դպրոցում սովորողներին սովորել սիրել տալու և սովորել սովորեցնելու կոնկրետ ուղիներ մշակվեն՝ կրթական գործընթացն ավելի դյուրին և արդյունավետ դարձնելու համար: Դպրոցում պետք է կարևորվի ուսուցչի մասնագիտական վարպետությունը.

ա. Ուսուցիչը երբեք անպատրաստ չպետք է մտնի դասարան,

բ. Ուսուցիչը մշտապես պետք է հետաքրքրվի իր գործով, տեղյակ լինի և ընդօրինակի առաջադիմականը և դրականը,

գ. Նա անընդհատ պետք է ինքնակրթվի և զբաղված լինի մանկավարժության վերջին նորությունները բացահայտելով, ուսումնասիրելով և կիրառելով:

## 1.2. Դպրոցի պատմությունը

Խոսել Լիճքի դպրոցի մասին, առանց գյուղի պատմությանն անդրադառնալու  հնարավոր չէ, ուստի պատմական աղբյուրներից օգտվելով, հակիրճ ներկայացնեմ Լիճք գյուղի անցյալն ու ներկան: Մեր նախնիները այստեղ են վերաբնակվել 1829-1830 թվականներին՝ գաղթելով Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառի Ալաշկերտ քաղաքի Բերդ թաղամասից:

Ըստ 1831-1842 թվականների արխիվային տվյալների՝ Եղեգնագյուղում սկզբից բնակություն են հաստատել Ալաշկերտից գաղթած 43 ընտանիքներ, մեկ ընտանիք՝ Ներքին Ադյաման (Ներքին Գետաշեն) գյուղից և երկու հոգի Թուրքիայից: Լիճք գյուղի կրթության մասին առաջին անգամ խոսվում  է 1886 թվականի արխիվային տվյալներում, որտեղ նշվում է, որ գրագետ էին Տեր Մեսրոպ Տեր Բաղդասարովի ընտանիքի անդամները, իսկ գյուղի որոշ երեխաներ կրթվում էին Հովե Ղազարովի և նրա հորեղբոր որդիներ Խաչատուր և Սիրական Հակոբովներին պատկանող դպրոցում:

1908 թվականին գյուղում բացվել է տարածաշրջանում առաջին եկեղեցուց անջատ քառամյա դպրոցը, որը մեծ իրադարձություն էր գյուղի համար: Շուտով կնշենք այս դպրոցի հիմնադրման 116 ամյակը: Դպրոց կարող էին հաճախել նաև աղջիկները: Դպրոցի 42 աշակերտներին դասավանդում էր մեկ ուսուցիչ: Նույն իրավիճակը պահպանվում է մինչև 20-ական թվականների սկիզբը, երբ փորձ էր արվում զարկ տալ կրթությանը, սակայն զգացվում էր մանկավարժական կադրերի պակաս: 1918 թվականին արդեն գյուղի դպրոցն ուներ այն ժամանակների համար բավարար կրթություն ունեցող, տեղացի ուսուցիչ՝ Խաչատուր Գրիգորյան  (Ջուլկի Խաչատուր): Այդ շրջանում դպրոցը տեղավորված էր «Հոխկի դիվանխանա» կոչվող շենքում, որը նաև դատարան էր:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին դպրոցը հիմնականում գործել է մասնավոր տներում ու կրկին եղել է քառամյա, ապա՝ յոթնամյա, իսկ 1933-1936 թվականներին կառուցվել է մեր գյուղի հին դպրոցը, որն էլ սկսել է գործել 1936-1937 ուսումնական տարվանից՝ միջնակարգ դպրոցի կարգավիճակով: Այդ ուսումնական տարվանից Լիճքի դպրոցը դարձել է միջնակարգ կրթության դարբնոց, որտեղ սովորել են Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Թազագյուղ, Ծակքար, Վերին և Ներքին Գետաշեն, Մադինա գյուղերից եկած դպրոցականները: Մինչև 1971-1972 ուստարին այդ դպրոցում էին միջնակարգ կրթություն ստանում Ծակքար գյուղի երեխաները:

Մեր դպրոցն իր գործունեության տարիներին տվել է 24 մեդալակիր, 8 գիտական աստիճան և կոչում ունեցող, շուրջ 1000-ից ավել  բարձրագույն կրթությամբ շրջանավարտ: Կոլեկտիվացման տարիներին գյուղի բնակչության շրջանում համատարած անգրագիտությունը վերացնելու նպատակով գործող դպրոցին զուգահեռ Հովհանյան Գաբրիելի  (Հովանի Գաբո) տանը Ջուլիկյան Խաչատուրի որդի Առաքելի նախաձեռնությամբ

ստեղծվեց լիկկայան, որը գործել է մինչև Մեծ Հայրենականի սկսվելը: Լիկկայանի գործունեության շրջանում չափահաս լիճքեցիների մեծ մասը դարձավ գրաճանաչ:

Լիճքի միջնակարգ դպրոցում սովորողների թիվը կտրուկ աճել է հետպատերազմյան տարիներին, որի պատճառով Մեծ հայրենականի տարիներին դպրոցի շենքում տեղակայված մանկատունը տեղափոխվում է Կամո: 1969 թվականին, աշակերտներին տեղավորելու համար, դպրոցի հին շենքի տնտեսական մաս կազմող հին շինությունների տեղում՝ դպրոցին կից կառուցվեց ևս 8 դասարան, իսկ 1970-1971 ուստարում՝ մարզադահլիճ:

1981 թվականին շահագործման հանձնվեց միջնակարգ դպրոցի նոր շենքը, իսկ հին դպրոցի շենքը մի քանի տարի անգործության մատնվեց, ապա դարձավ ուսումնաարտադրական կոմբինատ՝ կրկին իր գրկում մասնագիտություններ սովորեցնելով ենթաշրջանի դպրոցների բարձր դասարանցիներին: 1992 թվականից հին դպրոցը դարձավ ութամյա, այժմ՝ միջնակարգ դպրոց:

Ամենամեծ թվաքանակով սովորողներ դպրոցն ունեցել է 1973-1974 ուստարում՝ 1147 աշակերտ: Դպրոցի համար ամենաարդյունավետը եղել է 1963-1964 ուսումնական տարին, երբ դպրոցի բոլոր շրջանավարտները, բացառությամբ մեկի, ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Լիճքի միջնակարգ դպրոցի նոր շենքում 1988 թվականին ստեղծվեց համակարգչային կենտրոն, որն ամբողջ Հայաստանում այն ժամանակ երկրորդն էր: Համակարգչային կենտրոնը, ի պատիվ ստեղծողի, կրում է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատ, տրանսպորտի նախարար Խաժակ Անդրանիկի Դրամփյանի անունը: Այժմ Լիճքի միջնակարգ դպրոց հաճախում է 752 աշակերտ և նախակրթարանի՝ 67 սան:
Կրթության պետական կառավարման մարմնի կողմից տրված լիցենզիայի համաձայն դպրոցն իրականացնում է հանրակրթական ծրագրեր՝

- Տարրական /ընդհանուր 1-ին աստիճան/,
- Հիմնական /ընդհանուր 2-րդ աստիճան/,
- Միջնակարգ ընդհանուր /ընդհանուր 3-րդ աստիճան/,
- Նախադպրոցական կրթություն:

Դպրոցը նպատակ ունի սովորողի համար ձևավորելու այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն լավ է զգում, ինքնազարգացման, կարողությունների հետաքրքրությունների զարգացման, կյանքի հմտությունների ձևավորման համար կան անհրաժեշտ պայմաններ: Դպրոցի ձեռքբերումներից են հաջողության հասած շրջանավարտները, ովքեր այսօր դպրոցի կայացման և զարգացման մեջ մեծ ներդրում ունեցող անհատներ են: Դպրոցը միշտ գտնվել է համայնքի ուշադրության ներքո, իր չափանիշներով՝ բարձրորակ մանկավարժական աշխատողների առկայությամբ, նպաստել է դպրոցում հայրենանվեր վարքի բազմաթիվ դրսևորումների:

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ

| Ուստարի | Դասարան | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | 6-րդ | 7-րդ | 8-րդ | 9-րդ | 10-րդ | 11-րդ | 12-րդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2021-2022 | 31 | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 2 | 2 | 3 | 2 |
| 2022-2023 | 31 | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 2 | 2 | 3 |
| 2023-2024 | 30 | 2 | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 2 | 2 |

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ՝ 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

| Դասարաններ | Աշակերտների թիվ | Ա | Բ | Գ |
|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 53 | 25 | 28 | - |
| 2-րդ դասարան | 48 | 27 | 21 | - |
| 3-րդ դասարան | 66 | 35 | 31 | - |
| 4-րդ դասարան | 55 | 28 | 27 | - |
| 5-րդ դասարան | 74 | 28 | 20 | 26 |
| 6-րդ դասարան | 71 | 26 | 25 | 20 |
| 7-րդ դասարան | 71 | 20 | 28 | 23 |
| 8-րդ դասարան | 73 | 28 | 21 | 24 |
| 9-րդ դասարան | 79 | 24 | 27 | 28 |
| 10-րդ դասարան | 64 | 23 | 24 | 17 |
| 11-րդ դասարան | 47 | 25 | 22 | - |
| 12-րդ դասարան | 49 | 26 | 23 | - |

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ՝ 2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

| Դասարաններ | Աշակերտների թիվ | Ա | Բ | Գ |
|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 49 | 27 | 22 | - |
| 2-րդ դասարան | 67 | 35 | 32 | - |
| 3-րդ դասարան | 60 | 31 | 29 | - |
| 4-րդ դասարան | 75 | 30 | 20 | 25 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5-րդ դասարան | 74 | 29 | 23 | 22 |
| 6-րդ դասարան | 73 | 20 | 29 | 24 |
| 7-րդ դասարան | 73 | 29 | 20 | 24 |
| 8-րդ դասարան | 79 | 24 | 28 | 27 |
| 9-րդ դասարան | 71 | 23 | 28 | 20 |
| 10-րդ դասարան | 52 | 25 | 27 | - |
| 11-րդ դասարան | 49 | 26 | 23 | - |
| 12-րդ դասարան | 63 | 23 | 24 | 16 |

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ՝ 2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

| Դասարաններ | Աշակերտների թիվ | Ա | Բ | Գ |
|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 69 | 35 | 34 | - |
| 2-րդ դասարան | 60 | 31 | 29 | - |
| 3-րդ դասարան | 75 | 30 | 20 | 25 |
| 4-րդ դասարան | 77 | 33 | 23 | 21 |
| 5-րդ դասարան | 74 | 20 | 29 | 25 |
| 6-րդ դասարան | 74 | 30 | 20 | 24 |
| 7-րդ դասարան | 79 | 24 | 28 | 27 |
| 8-րդ դասարան | 70 | 23 | 28 | 19 |
| 9-րդ դասարան | 64 | 34 | 30 | - |
| 10-րդ դասարան | 54 | 28 | 26 | - |
| 11-րդ դասարան | 64 | 23 | 23 | 18 |

## 2.իրավիճակի վերլուծություն

### 2.1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վերլուծություն․

Ուսումնառության որակի և արդյունքների բարձրացման, բացահայտված խնդիրները լուծման համար անհրաժեշտ է իրականացնել իրավիճակի գնահատում՝ դիտարկելով հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը.
2. Կրթական գործընթացի կատարողականը և արդյունավետությունը.
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում.
5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը.
6. Տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը.
7. Մշտադիտարկումների իրականացումը, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ.
8. Դասարանական քննարկումների անցկացում, խնդիրների լուծումը.
9. Ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը.
10. Դասապրոցեսում ՏՀՏ, էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործումը:

Դպրոցի աշխատանքները հիմնականում համակարգված են, բայց մեր առջև խնդիր է դրված բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման որակը՝ հանրակրթության պետական չափորոշիչի (ՀՊՉ) և առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան: Դպրոցի ուսումնական պլանը մշակված և գործածության է դրված չափորոշչային պահանջներին համապատասխան: Դպրոցում իրականացվող հանրակրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատվում է կրթության պետական կառավարման մարմնի սահմանված կարգով՝ ամփոփիչ ստուգումների և ավարտական քննությունների միջոցով՝ արձանագրելով դրանք էլեկտրոնային մատյանում ընթացիկ և ամփոփիչ գնահատումներով, և հետադարձ կապ է տրամադրում սովորողներին՝ հնարավորություն տալով նրանց վերահսկել իրենց առաջընթացը և կատարել բարելավումներ, ինչպես նաև արտադպրոցական այլ ստուգատեսների միջոցով:

2023-2024 ուստարում նոր ՀՊՉ-ն ներդրվեց 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում, և ուսումնական գործընթացը կազմակերպվեց առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի պահանջներին համապատասխան: Նոր ՀՊՉ-ով պայմանավորված նախատեսվում էր կրթության գործընթացի վերանայում մի շարք ուղղություններով՝ սկսած ուսումնական պլանի կազմումից, մինչև նախագծային աշխատանքների իրականացումը և պարտադիր ուսումնական խմբակների իրականացումը:

ՀՊՉ-ն ներառում է հիմնական ծրագրեր.

1. Ուսումնական բնագավառների ու կրթության բովանդակության բաղադրիչներ,
2. Ուսումնական պլանների ընդհանրական կառուցվածքը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները,
3. Սովորողների գնահատման սկզբունքներն ու ձևերը,

4. Շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ:

Ելնելով ՀՊՉ-ի պահանջների պարտադիր լինելուց՝ նպատակահարմար ենք գտնում վերլուծությունը ներկայացնել ըստ վերոնշյալ բաղադրիչների:

Դպրոցում ներդպրոցական վերահսկողություն իրականացնել ուսումնական պլանների, ծրագրերի, դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների և մեթոդների ուղղությամբ, քանի որ վերջիններս ապահովում են նաև ՀՊՉ-ով սահմանված մյուս բաղադրիչները՝ շրջանավարտներին ներկայացվող նվազագույն որակական պահանջները, կարողունակությունները և վերջնարդյունքները՝ ըստ կրթական աստիճանների: Ըստ այդմ կարևորում ենք ուսուցիչների շարունակական վերապատրաստումը, ինքնակրթությունն ու ինքնազարգացումը, մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված նոր ՀՊՉ-ի ներդրմանն ուղղված դասընթացներին. այս պահին ուսուցիչները մասնակցում են հետևյալ առցանց վերապատրաստումներին՝ «ԹԻՉ» դասալսման գործիքի կիրառում, «Գնահատում», «Վերջնարդյունքներ և բնութագրիչներ», «Օրվա պլան և խաչվող» հասկացություններ: Կարևոր է գնահատման նոր համակարգին, մեթոդաբանությանը տիրապետելը, ուսումնառության արդյունավետության բարձրացումը օրվա դասի պլանում վերջնարդյունքներ սահմանման, ապա ՀՊՉ-ով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացման միջոցով:

Դպրոցի 7-րդ դասարաններում այս ուստարում առաջին անգամ իրականացվեց նախագծային ուսուցում: Գործում են «Մասնագիտական կողմնորոշում» և «Առողջ ապրելակերպ» խմբակները: ՀՊՉ պահանջներին համապատասխան կրթության ապահովման ներդպրոցական վերահսկողության արդյունքները պետք է քննարկվի մ/մ նիստերում և տնօրենին կից խորհրդակցություններում, այնուհետև՝ մանկխորհի տարեվերջյան նիստում:

Համեմատական վերլուծություն իրականացնելով վերջին չորս ուստարիների՝ հիմնական կրթության և միջնակարգ կրթության շրջանավարտների որակական և քանակական ցուցանիշները, տեսնում ենք, որ գերազանց սովորողների թիվը և տոկոսը տարեցտարի նվազել է՝ վերջին ուստարում հասնելով զրոյի, փոխարենը աճել է լավ և բավարար ցուցանիշներ ունեցող սովորողների թիվը: Այստեղից հետևություն ենք անում, որ անհրաժեշտ է ներդնել արդյունավետ մեթոդներ՝ սովորողների ցուցանիշների որակական արդյունքների բարձրացման, այդ թվում նաև կիրառելով խրախուսման տարբեր մեթոդներ:

*Հիմնական կրթության շրջանավարտների որակական և քանակական ցուցանիշները.*

| Ուստարի | Դասարան | սովորող | Գերզանց | Լավ | բավարար |
|---|---|---|---|---|---|
| 2019-2020 | 9-րդ Ա | 31 | 3 | 16 | 12 |
| | 9-րդ Բ | 35 | 5 | 16 | 14 |
| 2020-2021 | 9-րդ Ա | 34 | 6 | 12 | 16 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 9-րդ Բ | 31 | 3 | 16 | 11 |
| 2021-2022 | 9-րդ Ա | 34 | 4 | 16 | 14 |
| | 9-րդ Բ | 31 | 1 | 14 | 16 |
| 2022-2023 | 9-րդ Ա | 23 | 1 | 12 | 10 |
| | 9-րդ Բ | 28 | 1 | 22 | 5 |
| | 9-րդ Գ | 20 | 0 | 9 | 11 |

*Միջնակարգ կրթության շրջանավարտների որակական  և քանակական ցուցանիշները.*

| Ուստարի | Դասարան | սովորող | Գերզանց | Լավ | բավարար |
|---|---|---|---|---|---|
| 2019-2020 | 12-րդ Ա | 18 | 2 | 7 | 9 |
| | 12-րդ Բ | 26 | 1 | 14 | 11 |
| 2020-2021 | 12-րդ Ա | 26 | 1 | 19 | 6 |
| | 12-րդ Բ | 29 | 0 | 27 | 2 |
| | 12-րդ Գ | 20 | 0 | 12 | 8 |
| 2021-2022 | 12-րդ Ա | 30 | 0 | 18 | 12 |
| | 12-րդ Բ | 25 | 0 | 12 | 13 |
| 2022-2023 | 12-րդ Ա | 23 | 0 | 20 | 3 |
| | 12-րդ Բ | 24 | 1 | 16 | 7 |
| | 12-րդ Գ | 16 | 0 | 7 | 9 |

Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն, 2023-2024 ուստարվա ընթացքում սովորողներից 5-ն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Ստորև աղյուսակով ներկայացված են վերջին երեք ուստարիների տվյալները, որից երևում է, որ դպրոցում կրճատվել է ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը: ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության կազմակերպումը բոլոր սովորողների հետ սկզբունքային քաղաքականություն է Հայաստանում, հասարակության յուրաքանչյուր անդամի հավասար իրավունքների և հնարավորությունների նկատմամբ հարգանքի և ըմբռնման դրսևորում և արժեքային համակարգի ձևավորում:

Մանկավարժական համակազմը համալրվել մանկավարժական աշխատողներով (ուսուցչի օգնական, հոգեբան, լոգոպեդ), ովքեր դասավանդող ուսուցիչներին զուգահեռ աշխատում են ուսումնառության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների հետ՝ հեշտացնելու ուսումնական նյութի յուրացումը, ինչպես նաև նպաստելու նրանց սոցիալականացման գործընթացին՝  դրսևորվելու որպես ինքնուրույն անհատ:

Սակայն միջավայրային հարմարեցումները խիստ սահմանափակ են, չկա թեքահարթակ, առկա չէ որևէ հարմարեցված սանհանգույց, ծրագրային խելամիտ հարմարեցումներ:

| Ուստարի | Թիվը | Խնդիրը |
|---|---|---|
| 2021-2022 | 31 | • Ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարում՝ 16 սովորող<br>• Ինտելեկտուալ/մտավոր/ ֆունկցիաների խանգարում՝ 10 սովորող<br>• Տեսողական ֆունկցիաների խանգարում՝ 2 սովորող<br>• Լսողական ֆունկցիաների խանգարում՝ 1 սովորող<br>• Շարժողական ֆունկցիաների խանգարում՝ 2 |
| 2022-2023 | 7 | • Ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարում՝ 2 սովորող<br>• Ինտելեկտուալ/մտավոր/ ֆունկցիաների խանգարում՝ 3 սովորող<br>• Տեսողական ֆունկցիաների խանգարում՝ 1 սովորող<br>• Շարժողական ֆունկցիաների խանգարում՝ 1 |
| 2023-2024 | 5 | • Ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարում՝ 1 սովորող<br>• Ինտելեկտուալ/մտավոր/ ֆունկցիաների խանգարում՝ 2 սովորող<br>• Տեսողական ֆունկցիաների խանգարում՝ 1 սովորող<br>• Շարժողական ֆունկցիաների խանգարում՝ 1 |

ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ՝ ըստ ԱՈՒՊ-ի և ըստ հաստատված դասացուցակի, հատուկ մանկավարժի և հոգեբանի կողմից անցկացվում են շաբաթական երկու պարապմունք՝ 90 րոպե տևողությամբ: Դասավանդվող յուրաքանչյուր առարկան ունի իր առջև դրված տարեկան նպատակը և իրենից բխող կարճաժամկետ նպատակները: Ամփոփումը կատարվում է տարվա վերջում: Կարճաժամկետ նպատակների վերաբերյալ կազմվում են արձանագրություններ, որոնք գրվում են երկամսյա քննարկումների արդյունքում:

*Սովորողների թիվն ու առաջադիմությունը վերջին 4 փարիների ընթացքում.*

| Ուստարի | Տարվա սկզբին | Տարվա վերջում | Գերազանցիկ | Լավ | Բավարար | Որակ |
|---|---|---|---|---|---|---|
| 2021-2022 | 821 | 817 | 160 | 252 | 232 | 50,4% |
| 2022-2023 | 782 | 785 | 161 | 244 | 333 | 50,1% |
| 2023-2024 | 752 | 752 | 86 | 221 | 445 | 40,8% |

Սովորողների առաջադիմությունը վերջին երեք ուստարիների տվյալներով նվազել է մինչև 40,8 %: Գերազանց գնահատված սովորողների թիվը 2021-2022 ուստարվա տվյալների հետ համեմատած 160-ից դարձել է 86, ինչը գրեթե 50% նվազում է: Փոխարենը աճել է բավարար գնահատականներ ստացած սովորողների թիվը՝ 232-ից աճելով մինչև 445–ի, որը գրեթե կրկնակի աճել է 2021-2022 ուստարիների տվյալների հետ համեմատությամբ:

Դպրոցի աշակերտները մասնակցում են առարկայական օլիմպիադաներին: Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից՝ վերջին երեք ուստարիներին որոշակիորեն ավելացել է մասնակցող աշակերտների թիվը: Սակայն, 2023-2024 ուստարվա 752 սովորողներից միայն 16-ն է մասնակցել օլիմպիադայի դպրոցական փուլին, որը կազմում է աշակերտների 3%-ը, որից էլ հանրապետական փուլ հասել է 0.5%-ը, սակայն դա չի արտացոլում սովորողների առկա պոտենցիալն ու հնարավորությունները: Անհրաժեշտ է սահմանել խրախուսական մեխանիզմներ՝ մոտիվացնելու աշակերտներին, ինչպես նաև բարձացնելու մասնակցության որակն ու ձեռքբերումները: Միջազգային օլիմպիադաներին մասնակցության պասիվություն: Օլիմպիադաներին մասնակցության ցուցանիշներ՝ ըստ ուստարիների.

| Ուստարի | Դպրոցական փուլ | Մարզային փուլ | Հանրապետ. փուլ |
|---|---|---|---|
| 2021-2022 | 12 | 6 | 1 |
| 2022-2023 | 14 | 7 | 2 |
| 2023-2024 | 16 | 8 | 3 |

Դպրոցում բացակայությունների պատճառով լրացուցիչ քննությունների մասնակիցների թիվն, ըստ ուստարիների, աճել է 50%-ով, 2021-2022 ուստարվա համեմատությամբ 5 սովորողից 2023-2024 ուստարում դառնալով 11 սովորող: Դպրոցն ակտիվ մասնակցում է նաև մարզական միջոցառումներին, կազմակերպվում են դասարանական, արտադասարանական, արտադպրոցական բազմաթիվ միջոցառումներ, որոնք զարգացնում են սովորողի ճանաչողական ակտիվությունը, գեղագիտական ճաշակը, մշակութային զարգացվածությունը, հայրենասիրական դաստիարակությունը:

*Բացակայությունների պատճառով լրացուցիչ քննությունների մասնակիցների թիվն ըստ տարիների.*

| Ուստարի | Սովորող |
|---|---|
| 2021-2022 | 5 |
| 2022-2023 | 7 |
| 2023-2024 | 11 |

ԿՏԱԿ-ի և ԿԶՆԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ, որոնց մասնակցում են դպրոցի ուսուցիչները, էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետը, կազմակերպվում են քննարկումներ:

- Պարտադիր պայման է երկարօրյա ուսուցման իրականացումը, որը դեռևս չի կազմակերպվել,
- Գործում են առարկայական խմբակներ,
- Կազմակերպվում են միջոցառումներ, սովորողների ժամանցին ուղղված ծրագրեր,

- Դպրոցն ակտիվ մասնակցում է մարզային և համայնքային միջոցառումներին:

Որպես ուսումնադաստիարակչական աշխատանքների բաժնի ամփոփում, ներկայացնում ենք վերջին երեք ուստարիներին դպրոցի շրջանավարտների՝ ՀՀ տարբեր բուհեր դիմելու և կրթությունը շարունակելու վերաբերյալ տվյալները: Նախորդ ուստարվա հետ համեմատած՝ այս տարի դիմորդների թիվը կրճատվել է գրեթե 56%-ով, 63-ից դառնալով 28: Իմ գնահատմամբ՝ այս ցուցանիշը ուղղակիորեն արդյունքն է կրթության որակի անկման և կրթության նկատմամբ հետաքրքրության և մոտիվացիայի նվազման:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների թիվը՝ ըստ ուստարիների.

| Ուստարի | Դիմորդ | Ընդունված |
|---|---|---|
| 2021-2022 | 56 | 10 |
| 2022-2023 | 63 | 29 |
| 2023-2024 | 28 դիմորդ | |

*Վերլուծության հիման վրա սահմանվում են հետևյալ նպատակները և խնդիրները՝*

- Հանրակրթության պետական չափորոշիչի (ՀՊՉ) և առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան աշխատանքային կարգապահության և ուսուցման որակի բարձրացում,
- ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով ծրագրային (խելացի հարմարեցումներ) և միջավայրային հարմարեցումների ապահովում,
- Նախագծային ուսուցման կազմակերպում և թիմային աշխատանքի կարողությունների զարգացում,
- Ըստ անհրաժեշտության երկարօրյա ուսուցման կազմակերպում,
- Առարկայական օլիմպադաներին մասնակցության խթանում, մասնակցության ցուցանիշների և որակի բարձրացում,
- Սովորողների կրթության քանակական և որակական ցուցանիշների բարձրացում:

## 2.2. Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները

Մանկավարժական որակավորում ունեցող և բարձր մարդկային հատկանիշներով օժտված մանկավարժական աշխատողների առկայությունն անչափ կարևոր է ուսումնդաստիարակչական գործընթացի արդյունավետ և որակյալ կազմակերպման հարցում: Դպրոցում կա 70 մանկավարժական աշխատող, որոնցից 52-ը՝ ուսուցիչ: Նրանցից 3-ն ունեն միջին մասնագիտական կրթություն, սակայն կամավոր ատեստավորմանը մասնակցել են երկուսը, և միայն մեկն է հաղթահարել անցողիկ շեմը և կշարունակի աշխատել

դպրոցում, մյուսը կաշխատի նախակրթարանում՝ որպես դաստիարակի օգնական: Ուսուցիչների 1/5-րդը յուրաքանչյուր տարի մասնակցել է տարեկան հերթական վերապատրաստումներին և պարտադիր ատեստավորմանը: Բոլոր ուսուցիչները մասնակցել են ՀՊՉ-ի վերապատրաստումներին 2023 և 2024 թվականներին:

Ընթացիկ ուսումնական տարում դպրոցի հաստիքացուցակը և մանկավարժական համակազմը ներկայացվում է ստորև.

| **Հաստիք** | **Պաշտոն** | **Հաստիքների ընդհանուր քանակը** |
|---|---|---|
| Վարչական աշխատող | Տնօրեն | 1,00 |
| Վարչական աշխատող | Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ | 1,00 |
| Վարչական աշխատող | Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ | 1,00 |
| Վարչական աշխատող | ֆինանսատնտեսական գծով տեղակալ | 1,00 |
| Վարչական աշխատող | Գլխավոր հաշվապահ | 1,00 |
| Մանկավարժ. հաստիք | Զինղեկ | 1,00 |
| Մանկավարժ. հաստիք | Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ | 1,00 |
| Մանկավարժ. հաստիք | Գրադարանավար 2 | 1,50 |
| Մանկավարժ. հաստիք | Լաբորանտ | 2,00 |
| Մանկավարժ. հաստիք | Դասղեկ | 30,00 |
| Մանկավարժ. հաստիք | Մեթոդ միավորման նախագահ | 7,00 |
| Մանկավարժ. հաստիք | Հոգեբան | 1,00 |
| Մանկավարժ. հաստիք | Ուսուցչի օգնական | 5,50 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմ | Քաղպաշտպանության շտաբի պետ | 0,35 |
| Ուսումնաօժանդակ կազմ | Էլ. կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | 1,00 |
| Ուսումնաօժանդակ կազմ | Գործավար | 1,50 |
| Ուսումնաօժանդակ կազմ | Փականագործ | 1,00 |
| Ուսումնաօժանդակ կազմ | Հնոցապան | 4,00 |

| | | |
|---|---|---|
| Ուսումնաօժանդակ կազմ | Խոհարար | 2,50 |
| Ուսումնաօժանդակ կազմ | Հավաքարար | 6,50 |
| Ուսումնաօժանդակ կազմ | Պահակ | 4,00 |

2023-2024 ուստարվա տվյալներով՝

- յոթ ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորմանը. (Առաքելյան Վարդան՝ 62 % Առաքելյան Քնարիկ՝ 70 %, Ավետիսյան Նելլի՝ 85 %, Գևորգյան Գոհար՝ 75 %, Հարությունյան Գագիկ 68 %, Հովհաննիսյան Գոհար՝ 41 %, Վարդանյան Արփինե՝ 64 %)
- Երկու ուսուցիչ ստացել է որակավորման տարակարգ՝ 1-ին աստիճանի.
- Մանկավարժական աշխատողների միջին տարիքը՝ 61-ն է.
    - Մինչև 30 տարեկան՝ 9 .
    - Մինչև 63 տարեկան՝ 42.
    - Մինչև 70 տարեկան՝ 16.
    - Մինչև 80 տարեկան՝ 3.
- Ուսուցիչների դրույքաչափերն ըստ ստաժի կազմում է՝
    - Դրույքաչափը (5-ից 15 տարվա ստաժ)՝ 149 919 ՀՀ դրամ.
    - Դրույքաչափը (15 և ավել տարվա ստաժ)՝ 152 460 ՀՀ դրամ.
    - Կամավոր ատեստավորման դրույքաչափ՝ 200 000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով Հանրակրթության մասին ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության որոշումները, ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված կարգերը, դպրոցում մշակվել է ներքին վերահսկողության համակարգ, որի միջոցով շարունակաբար գնահատվում են մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունները, դասավանդման որակն ու կիրառվող մեթոդները: Դա իրականացվում է ներդպրոցական վերահսկողության պլանի հիման վրա՝ մշտադիտարկման միջոցով: Մշտադիտարկում իրականացվում է դասալսումների, տնօրինության կողմից տրվող գրավոր առաջադրանքների և դրանց արդյունքները ուսումնասիրության միջոցով, մեթոդական միավորումների հաշվետվությունները, կազմվում են եզրակացություններ:

2024-2029թթ զարգացման սույն ծրագիրը մշակելիս իրականացրել ենք հարցում մանկավարժական աշխատողների շրջանում՝ մասնագիտական զարգացման կարիքները դուրս բերելու և ճիշտ նպատակներ ու խնդիրներ սահմանելու նպատակով: Հարցմանը մասնակցել են բոլոր մանկավարժական աշխատողները: Հարցերը կազմվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի օգոստոսի 5-ի N30-Ն հրամանով հաստատված

հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշների և պաշտոնային նկարագրի հիման վրա:

Մանկավարժական աշխատողները և ուսուցիչները մասնագիտական որակների բարձրացման և գիտելիքների, մանկավարժական հմտությունների զարգացման նպատակով մասնակցել են տարբեր վերապատրաստումների և դասընթացների: Սակայն պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ եթե ավանդական դասավանդման ընթացքում առանցքային է եղել ուսուցչի դերը որպես գիտելիք կրողի, և ուսուցիչը հանդիսացել է գիտելիքը և փորձառությունը փոխանցողը, ապա այժմ ուսումնառության կազմակերպման ընթացքում ուսուցչից պահանջվում կարողություններ և հմտություններ՝ սովորողներին ոչ միայն գիտելիք և փորձառություն փոխանցելու, այլ համագործակցելու, նախագծային աշխատանքներ իրականացնելու, սովորողների կարողությունները զարգացնելու միջավայր ստեղծելու:

Վերապատրաստումներից հետո յուրաքանչյուր փոփոխություն, նորամուծություն պետք է քննարկվի մ/մ նիստերում: Վերահսկողությունն իրականացվում է թեմատիկ պլանների քննարկման, օրվա դասի պլաններում կարողունակությունների ձևավորման և զարգացման հմտություններ ձևավորման ուղղությամբ, ինչպես նաև տնօրենի, տնօրենի տեղակալի, մ/մ նախագահի և ուսուցիչների կողմից դասալսումների միջոցով առանձնապես 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում: Ուսուցիչների մեծամասնությունը պետք է օգտվի նաև ԿԶՆԱԿ հիմնադրամի կայքէջում զետեղված պաշարների շտեմարանից, շատ հարցերով քննարկումներ ունենա մեկնթոր դպրոցի հետ /կարողունակություններ, վերջնարդյունքներ՝ ըստ կրթական աստիճանների, հենքային ուսումնական պլան, առարկայացանկի ձևավորման սկզբունքներ/:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշների վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված են ժամանակակից ուսուցչից ակնկալվող կարողունակությունները և դրանց դրսևորման մակարդակը:

Ըստ մասնագիտական գործունեության ձևերի՝

1. Դասընթացների և դասերի պլանավորում,
2. Դասավանդման մեթոդներ, ռազմավարություններ և ներառականություններ,
3. Ռեսուրսների կառավարում,
4. ՏՀՏ ինտեգրում,
5. 21-րդ դարի հմտությունների խթանում,
6. Սովորողների կարիքների բացահայտում,
7. Ուսումնառության գնահատում,
8. Կրթության ոլորտի օրենսդրություն և պրակտիկայի իմացություն,
9. Մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում,

10. Ուսումնական գործընթացի համընդհանուր ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողություններ,
11. Մասնագիտական բարեվարքություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն:

Անչափ կարևոր է նշված ուղղություններով կազմակերպել և խրախուսել ուսուցիչների կարողությունների զարգացումը՝ վերապատրաստումների, տարբեր գիտաժողովների և քննարկումների մասնակցելու, ինչպես նաև մասնագիտական գրականություն ուսումնասիրելու և ամենակարևորը ինքնակրթության միջոցով:

Դպրոցում մանկավարժական աշխատողները բաժանվում են 2 խմբի՝

- Երիտասարդ մանկավարժներ, որոնք կարողանում են հեշտությամբ յուրացնել նորագույն տեխնոլոգիաները և կիրառել ուսումնական գործընթացում, օգտագործում են տարբեր ինտերակտիվ գործիքակազմեր,
- Միջին և միջինից բարձր տարիքի մանկավարժներ, որոնք կիրառում են հիմնականում ուսուցման ավանդական մեթոդները: Դժկամությամբ են կիրառում նորագույն տեխնոլոգիաների տված հնարավորությունները, գործիքները:

Երիտասարդ ուսուցիչներն օգնում են բարձր տարիքի մանկավարժներին՝ տեխնոլոգիաների օգտագործման հարցում, և փոխարենը ստանում են փորձառություն աշակերտների հետ աշխատանքը արդյունավետ և նպատակային կազմակերպելու հարցում: Թվարկվածից յուրաքանչյուրի համար սահմանված են դրսևորման տարբեր մակարդակներ՝ սկսնակից մինչև փորձագիտական:

21-րդ դարում, երբ անշրջելիորեն մեր կյանք ու կրթական համակարգ են մտել տեղեկատվական տեխնոլոգիաները, շատ է կարևորվում ՏՀՏ գործիքների և էլեկտրոնային կրթական ռեսուրսների ներդրմամբ ուսումնառության կազմակերպումը: Դպրոցում առկա է անլար ինտերնետային կապ: Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը նպաստում են՝ «Պաշարների շտեմարանը», «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կայքը, ԿՏԱԿ-ի ԿԿՏ և ԴԿՏ համակարգերը: Սակայն պայմանավորված դպրոցում աշխատող ուսուցիչների տարիքային բարձր շեմով (միջին տարիքը՝ 61 տարեկան)՝ ՏՀՏ գործիքների կիրառումը առաջացնում է դժվարություններ:

Ուսուցիչների գրեթե 60%-ը կարողանում է կիրառել ինտերակտիվ մեթոդներ, դասընթացը պլանավորել և դասը կազմակերպել սովորողների կարիքներին համապատասխան, սակայն բարձրաձայնում են, որ նշված բոլոր մասնագիտական ձևերի փորձագիտական մակարդակի հասնելու համար կարիք ունեն շարունակական գործնական վերապատրաստումների, գործնական աշխատանքների կատարմամբ: Միաժամանակ, բարձրաձայնում են ինքնակրթության, ինքնուրույն մասնագիտական նոր ձեռքբերումների ուսումնասիրության և ներդրման, սակայն դրա համար նաև ստեղծված են համապատասխան պայմաններ և ներդպրոցական միջավայր:

Չնայած դպրոցում ներդրված է համընդհանուր ներառականությունը և դպրոցում տարբեր ուսումնական տարիների ներգրավված են եղել տարբեր կրթական կարիքներով սովորողներ, սակայն այդ ուղղությամբ մասնագիտական աշխատողները մասանգիտական աշխատանքի և փորձի փոխանակման անհրաժեշտություն են տեսնում:

21-րդ դարի հմտությունների շրջանակներում ուսուցիչը պետք է ստեղծի բնականոն միջավայր՝ առավելագույնի հասցնելու սովորողի կողմից իրական աշխարհում ապրելու հմտությունների ակտիվ կիրառումը, հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները, դասարանի կրթական կարիքները, դասը վարելիս կիրառի համապատասխան ռազմավարություններ:

## 3.3. Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը

Դպրոց-համայնք, կրթության կառավարման մարմիններ և շահառու այլ կազմակերպություններ արդյունավետ համագործակցությունը, ծնողական համայնքի մասնակցությունը և աջակցությունը դպրոցական կրթության իրականացման հարցում էական նշանակություն ունեն:

2021 թվականից ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքը դարձել է խոշորացված բազմաբնակավայր համայնք, իսկ Լիճք գյուղը միավորվել և վերանվանվել է Մարտունու խոշորացված համայնքի Լիճք բնակավայր: Լիճք գյուղը գտնվում է Սևանա լճի հարավարևմտյան մասում՝ լեռներով շրջապատված գոգավորությունում, մայրաքաղաքից 113 կմ հեռավորության վրա է, նրան ամենամոտն են Ներքին Գետաշեն, Ծակքար բնակավայրերը: Գյուղի տարածքում կան բազմաթիվ աղբյուրներ, որոնց ջրերից գոյանում է Լիճք գետը: Մարտունի քաղաքը Լիճք բնակավայրից հեռու է 9 կմ–ով: Մարտունու տարածաշրջանում շատ են եկեղեցիները և հին ամրոցները: Լիճքում գործում է Սուրբ Խաչ եկեղեցին (2014թ.) Տեր Գնել քահանա Մարտիրոսյանի քահանայությամբ:

Դպրոցը մարզային ենթակայության հաստատություն է: Ակտիվ համագործակցում է կրթության կառավարման պետական, մարզային և համայնքային կառույցների հետ: Մասնակցել է ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված ուսումնական նախագծերին, միջոցառումներին, «Ինչ գիտի համացանցն իմ մասին» շարադրությունների մրցույթին, «Քո արվեստը դպրոցում» աբոնոմետային ծրագրի շրջանակներում այցելություններ է կազմակերպել դեպի մարզային թանգարաններ: Սերտ համագործակցություն է հաստատված Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի հետ, տնօրենը մասնակցում է մարզային խորհրդակցություններին և քննարկումներին, համագործակցում ԿՏԱԿ-ի հետ, ուսուցիչները օգտագործում են ստեղծված էլեկտրոնային ռեսուրսները և ներբեռնում են դպրոցի հաշվետվությունները «Հայկական կրթական միջավայր» պորտալում: ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ՏՄԱԿ-ի հետ համագործակցությունը նպաստում է դպրոցում կրթության կազմակերպմանն ու իրականացմանը:

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, ձևավորվել է որպես 9 անդամից բաղկացած առանձին խորհուրդ: Խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Դպրոցի կառավարման խորհուրդը գործել է կոլեգիալության սկզբունքով, ժամանակին հրավիրվելով նիստեր, քննարկելով ներքին գնահատման արդյունքները, դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը, սակայն դպրոցի ներքին կյանքին և ուսումնադաստիարակչական գործընթացին մասնակցելու նախաձեռնողականությունը շատ ցածր է:

Դպրոցի սաներից 12-ը հաճախում են Մարտունու Արվեստի դպրոց: Ամեն տարի դպրոց-պետական քոլեջներ համագործակցության շնորհիվ հիմնական և միջնակարգ կրթության շրջանավարտներից շատերը ուսումը շարունակում են տեղի պետական քոլեջներում: Բուհերից և քոլեջներից մշտապես իրազեկող խմբեր այցելում են հաստատություն՝ օգնելու սովորողներին մասնագիտական կողմնորոշման հարցում: Առկա է ակտիվ համագործակցություն «Լիճքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ: Տարրական դասարանների աշակերտները իրենց բեմադրություններով և ելույթներով ստեղծագործական համարներ են ներկայացրել մանկապարտեզի սաներին ամբողջ տարվա ընթացքում՝ սերմանելով սեր դպրոցի նկատմամբ:

Մարտունի խոշորացված համայնքում գործում են մեկ տասնյակից ավելի համայնքային մանկապարտեզներ, դրանից միայն մեկը՝ Լիճք բնակավայրում: Բնակավայրում չկան զարգացման կենտրոններ, հասարակական կամ երիտասարդական կազմակերպություններ, որոնք կարող են նպաստել համայքնի և մարզի զարգացմանն ու առաջընթացին, դպրոցից դուրս կազմակերպել երիտասարդների հետաքրքիր ու զարգանող ազատ ժամանցն ու նպաստել նրանց առաջընթացին: Քանի որ Լիճքում սահմանափակ են կամ գրեթե բացակայում են արտադպրոցական միջոցառումների հնարավորությունները պատանիների, երիտասարդների ազատ ժամանցը հետաքրքիր ու բովանդակային կազմակերպելու համար, հետևապես դպրոցը կարող է անհրաժեշտաբար ստանձնել համայնքային զարգացման կենտրոնի դերակատարումը՝ սովորողներին ներգրավելով ստեղծել ինտելեկտուալ միջավայր, որտեղ բոլոր պատանիները, երիտասարդները, ինչու ոչ նաև մեծահասակները կկարողանան զարգացնել ու բավարարել իրենց հետաքրքրությունները, մասնագիտական կարողություններն ու հմտությունները, և իրենց առօրյան դարձնեն հետաքրքիր և բովանդակալից: Այսպիսի ինտելեկտուալ և զարգացնող միջավայրում կարող են լուծման ուղիներ գտնել համայնքային խնդիրների համար, նպաստեն դրանց հաղթահարմանը:

Այս նպատակի իրագործման համար դպրոցը պետք է խորացնի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմնի հետ, իսկ նման հնարավորություններ ու հեռանկար դպրոցն ունի և՛ մարդկային, և՛ նյութատեխնիկական ռեսուրսների առումով:

Ծնողական համայնքի ակտիվ ծնողները հանդես են գալիս նախաձեռնություններով՝ հատկապես ներառական և ապահով միջավայրի, բուլլինգի և սպառնալիքի կանխարգելման

ուղղությամբ տարվող աշխատանքներում: Ծնողական համայքնի մասնակցությամբ դպրոցում իրականացվում են նաև վերանորոգման աշխատանքներ, որտեղ ծնողները ներդնում են իրենց աշխատուժը՝ դպրոցում կրթական և դաստիարակչական միջավայրը բարելավելու նպատակով: Նպատակային և համախմբված աշխատանքի շնորհիվ բուլինգի դեպքեր նկատվելիս անմիջապես լինում է արձագանք, եղել են մի քանի կարճաժամկետ, նոր սկսվող դեպքեր, որոնք կանխարգելվել են: Խրախուսվում է քննադատական մտածողությունը, դպրոցի ներսում հարգվում է բոլորի կարծիքը՝ անկախ տարիքից: Սովորողները ազատ են արտահայտելու իրենց կարծիքը, այդ թվում՝ դպրոցում առկա խնդիրների մասին՝ հարգելով միմյանց իրավունքներն ու արժանապատվությունը: Բուլինգի կանխարգելման հարցում ծնողական համայնքը, ինչպես նաև ուսուցիչներն ունեն մեծ ազդեցություն: Դպրոցում կազմակերպվում են իրազեկությունը բարձրացնող հանդիպումներ: Դասղեկական ժամերին պարբերաբար քննարկվում է բուլինգի երևույթը, խոսվել դրա վատ ազդեցությունների ու հետևանքների մասին:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Համայնքային միջոցառումներին ակտիվ մասնակցություն,<br>• Լիազոր մարմնի հետ խորհրդատվությունների ու քննարկումների անցկացում,<br>• Դպրոցի կառավարումը կատարվում է ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև հաստատության կանոնադրությանը համապատասխան,<br>• ԿԳՄՍՆ կողմից առաջարկված նախագծերին, միջոցառումներին, մրցույթներին ակտիվ մասնակցություն,<br>• Սերտ համագործակցություն Գեղարքունիքի մարզպետարանի հետ,<br>• Համագործակցություն ՀՀ պաշտպանության նախարարության, ԿՏԱԿ-ի ,ԳԹԿ-ի, ԿՁՆԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, այլ կազմակերպությունների հետ,<br>• Դպրոցի և համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ ձևավորված համագործակցության | • Կառավարման խորհրդի նախաձեռնության պակաս,<br>• Գեղարքունիքի մարզի և Մարտունի խոշորացված համայնքի կրթական, մշակութային, սպորտային հաստատությունների հետ ոչ բավարար համագործակցություն,<br>• Մարզային և համայնքային հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հետ ոչ բավարար համագործակցություն,<br>• Արտաքին կապերի և համագործակցության զարգացման փորձառության պակաս,<br>• Դոնոր կազմակերպությունների և անհատ բարերարների հետ համագործակցության բացակայություն,<br>• Պետական ֆինանսավորումից բացի այլ ներդրումների |

| | |
|---|---|
| զարգացման լավ նախադրյալների առկայությունը,<br>• Կրթության կազմակերպմանն ու իրականացման ծնողական համայնքի մասնակցությունը և աջակցությունը,<br>• Համայնքի ուշադրությունն ու հոգատարությունը Լիճք բնակավայրի միակ հանրակրթական ուսումնական հաստատությանը,<br>• Լիճք բնակավայրի ընդգրկվածությունը Մարտունի խոշորացված բազմաբնակավայր համայնքում, որտեղ գործում են արվեստի և մշակույթի կենտրոններ, մարզադպրոց, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ,<br>• Կրթամշակութային, սպորտային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման հնարավորություններ,<br>• Դպրոցի կառավարման խորհուրդը աջակցում և վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի նպատակների իրականացմանը,<br>• Դպրոցը մշտապես մասնակցում ՏԻՄ-ի կազմակերպած կրթական, սպորտային, մշակութային միջոցառումներին,<br>• ՄԱԿ-ի պարենային ծրագրի շրջանակներում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի իրականացում<br>• Դպրոցը որպես Լիճք բնակավայրի համայնքային զարգացման կենտրոն զարգացնելու հեռանկարի առկայություն: | բացակայություն, որի շնորհիվ հնարավոր կլիներ համալրել կամ թարմացնել դպրոցի նյութատեխնիկական բազան,<br>• Տարածքային համաչափ զարգացման ծրագրերի շրջանակներում ձևավորված ոչ բավարար համագործակցություն,<br>• Համայնքային միջոցների հաշվին դպրոցում սոցիալական ծրագրեր հիմնականում չեն իրականացվել,<br>• Համագործակցությունը Մարտունի խոշորացված համայնքի, Գեղարքունիքի մարզպետարանի հարակից դպրոցների, նախադպրոցական / պետական եւ մասնավոր/ հատատությունների հետ ոչ բավարար մակարդակով է իրականացվել,<br>• Դպրոցը որպես Լիճք բնակավայրի համայնքային զարգացման կենտրոն զարգացնելու ուղղությամբ ոչ բավարար աշխատանքներ են իրականացվել,<br>• ԱՏՁՄ-ի հետ համագործակցության հնարավորություն, որը թույլ կտա բացել Արմաթ ինժեներական լաբորատորիա,<br>• Բնակավայրում գործող հասարակական կազմակերպություններ չկան,<br>• Կրթության կառավարման և տարբեր մարմինների հետ համագործակցության պակաս: |

## 2.4. Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերի նկարագրություն․

Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի և դպրոցի կանոնադրության դրույթներին համապատասխան, կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով, դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, մեթոդական միավորումներ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ և այլն: Դպրոցում ձևավորվել և գործում են մանկավարժական խորհուրդը, առարկայայկան մեթոդական միավորումները, ծնողական խորհուրդը, աշակերտական խորհուրդը: Դպրոցը հոգաբարձուների կամ շրջանավարտների խորհուրդ չունի:

***Մանկավարժական խորհուրդ (Մանկխորհ)***

Մանկխորհը 2024-2025 թթ. ուսումնական տարվա մեկնարկին՝ մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստին, դպրոցի տնօրենի հրամանով ձևավորվել է մանկխորհը որպես մանկավարժական աշխատողներից կազմված խորհրդակցական մարմին, որի նախագահին ի պաշտոնե դպրոցի տնօրենն է: Մանկխորհը կազմված է 69 անդամից (բոլոր մանկավարժական աշխատողները և ծնողական խորհրդի նախագահը մանկխորհի անդամ են): Խորհուրդն իրականացնում է ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված գործառույթներ՝ հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերին համապատասխան: Նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, բաց են, որին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ծնողխորհրդի և աշակերտական խորհրդի նախագահները: Մանկխորհը քննարկել և որոշումներ է ընդունել նոր պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի, նոր դասագրքերի, զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրների, ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի վերաբերյալ:

***Առարկայական մեթոդական միավորումներ* (Մեթոդմիավորումներ)**

2024-2025 ուստարում ձևավորված և գործող առարկայական մեթոդմիավորումները յոթն են՝ «հայոց լեզու և գրականություն», «օտար լեզուներ», «պատմա-աշխարհագրական», «քիմիա-կենսաբանություն», «մաթեմատիկայի», «ֆիզիկայի», «տարրական դասարաններ»: Մեթոդմիավորումները հրավիրել են նիստեր ըստ իրենց կողմից սահմանված ժամանակացույցի, ուսուցիչների և մանկավարժական աշխատողների համար հնարավորություն են ստեղծել փորձի փոխանակման, մասնագիտական հմտությունների զարգացման համար:
Մեթոդմիավորումները քննարկել և առաջարկություններ են ներկայացրել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման, առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, թեմատիկ պլանների, սովորողներին

դասագրքերով և այլ ուսումնական նյութերով ապահովելու, գործնական և թեմատիկ աշխատանքների վերաբերյալ: Քննարել և կարծիք են ձևավորել նոր դասագրքերի, դասալսումներ և բաց դասերի վերաբերյալ և այլն:
Մեթոդմիավորումները մեծ աշխատանք են կատարել մասնավորապես նոր ՀՊՉ-ի պահանջներով ուսուցումը կազմակերպելու հարցում, հաճախ կատարելով ծանրաբեռնված և չկանոնակարգված աշխատանք:

***Ծնողական խորհուրդ* (Ծնողխորհուրդ)**

Ծնողխորհուրդը ձևավորվել է կանոնադրությամբ սահմանված կարգով՝ դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից, գործում է դպրոցի կանոնադրության 96-106 կետերի դրույթներին համապատասխան: 2024-2025 ուստարում դպրոցում ձևավորված ծնողխորհուրդը բաղկացած է 34 անդամից, իրականացվել է ծնողխորհրդի նախագահի ընտրություն՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Նախորդ ուստարիներին ծնողխորհուրդը ապահովել է ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադպրոցական և արտադասարանական կրթությանը և դաստիարակությանը, աջակցել սովորողների նախասիրությունների և հետաքրքրությունների բացահայտմանը, աջակցել պետական տոների և հիշատակի օրերի միջոցառումների կազմակերպմանը, համայնքային շաբաթօրյակների, ծառատունկերի իրականացման աշխատանքներին, աշակերտ-դպրոց-ծնող կապի ամրապնդմանը: Մասնակցել է դպրոցի ներքին գնահատման գործընթացին, ծնողական համայնքին է ներկայացրել կրթական գործընթնացի ձեռքբերումներն ու խնդիրները, իրականացրել է դպրոցի սովորողների շրջանում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին օգնություն ցույց տալու սոցիալական միջոցառումներ: կազմակերպել է սեմինարներ «Երեխաների իրավունքները», «Դրական ծնողավարում» թեմաներով, մասնակցել ԿԱՊԿ ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրացմանը:
Ծնողխորհրդի մասնակցությամբ դպրոցում ձևավորվել է բազմակարծիք և ներառական միջավայր: Ծնողխորհրդի կողմից կազմակերպվել են էքսկուսիաներ, ճանաչողական այցեր, որոնց մասնակից եղ դարձել դպրոցում սովորողների մեծամասնությունը, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողները, բացառելով սովորողների շրջանում բուլինգի, փոխադարձ վիրավորանքների, բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերը:
Ծնողխորհուրդը հետևողականորեն աջակցել է Դպրոցական կայուն սնունդ ծրագրի իրականացմանը, կազմակերպել քննարկում ծնողների հետ՝ «Երեխաների իրավունքները», բուլլինգի կանխարգելման, ծխախոտի և այլ վնասակար նյութերի օգտագործման հետևանքները երեխաների առողջության վրա, ծնող-ուսուցիչ- աշակերտ և այլ թեմաներով:

***Աշակերտական խորհուրդ (այսուհետ՝ Աշխորհ)***

Աշխորհը ինքնակառավարման սկզբունքներով օժտված ներկայացուցչական մարմին է, որի նպատակն է աջակցել դպրոցում կրթական գործընթացի իրականացմանը, նպաստել կառավարման կոլեգիալության ու հրապարակայնության բարձրացմանը, ապահովել սովորողների կամարտահայտումը, ներգրավվածությունն ու բովանդակային մասնակցությունը իրենց իսկ կրթության կազմակերպմանը:
2024-2025 ուստարում աշխորհը կազմվել է 19 անդամից, և գործում է համաձայն իր կանոնադրության՝ մշակված ԿԳՄՍՆ կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության հիմքով:
Աշխորհի գործունեությունը ընդգրկել է՝ աշակերտական ընդհանուր ժողովի նախապատրաստական աշխատանքները, աշխորհրդի ընտրությունները, «Ոսկե աշուն», «Հայոց բանակը», «Ամանորյա ցուցահանդես», «Լավագույն սամունքող», «Հաջողության պատմություն», «Ազգագրական և ժողովրդական պարերի մրցույթ», «Մայրենիի օրը», «Հայոց ցեղասպանությունը» միջոցառումների կազմակերպանը աջակցելը, շաբաթօրյակներին, ծառատունկերին մասնակցելը, աշակերտների իրավունքների խախտման դեպքերը բացահայտելը և քննարկելը աշխորհի նիստում և այլն: Դպրոցի աշակերտուհի Գայանե Մկրտչյանը 2022-2023 ուստարում ընդգրկված է եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի կազմում: Նրա ձեռք բերած գիտելիքներն ու կուտակած փորձը օգտագործում են ի նպաստ դպրոցի աշխորհի կարողունակությունների զարգացմանը:
Դպրոցի տնօրենությունն էլ մշտապես խթանել է աշխորհի նախաձեռնությունները՝ այդ կերպ զարգացնելով սովորողների կազմակերպչական և ստեղծագործական հմտությունները: Աշխորհը իրականացրել է զրույց-քննարկումներ աշակերտների շրջանում միմյանց նկատմամբ դրսևորվող բուլլինգի, խտրական վերաբերմունքի վերաբերյալ:

| *Ուժեղ կողմեր* | *Թույլ կողմեր* |
|---|---|
| • Խորհրդակցական մարմիններից յուրաքանչյուրը գումարում է նիստեր և կազմակերպում խորհրդի աշխատանքը սահմանված կարգին համապատասխան, իրենց լիազորությունների և իրավասությունների շրջանակում,<br>• Մանկավարժական խորհրդի գործունեությունը կազմակերպվում է գործող համաձայն իրավական ակտերի, | • Դպրոցում գործող խորհրդակցական մարմինների միջև ձևավորված չէ արդյունավետ համագործակցություն,<br>• Խորհրդակցական մարմինները չեն ցուցաբերում նախաձեռնողականություն,<br>• Մանկավարժական խորհրդի անդամները հանդես չեն գալիս նոր առաջարկներով և հիմնականում համաձայնություն են տալիս ներկայացված նախագծերին՝ առանց հարցադրումների, |

| | |
|---|---|
